

սրտին յազմունք և կիրք սխրալի բարձրութիւններ և զարհուրելի զահալիժումներ ունին։ Ինչ զաբանք ուրեմն որ և մեծն Շէյք-սփիի աշպիխի յողողողմունք և ընդստումներ կը նկարագրէ։ Ըստ այնմ Շէյքսփիրի ներկայացուցած խառն ի խառն ամբոխին մէջ երկու երեք դէմք միայն համակրելի են և յստակ կ'արձանանան արեւնոտ ամբողջի մը վրայ։

Շէյքսփիր այս ողբերգութեան նիւթը քաղած է Անգլիոյ ժողովրդական վէպերէն՝ աւստնոց սոսկումն աւելցնելով։ Ընդհանուր բազմաթիւ անմիջապէս կը զանազանենք երկու հեղինակներուն կամ գորոցներուն տարբերութիւնը։ Սոփոկէի մէջ միայն Անտիգոնէի դէմքն է որ մեր ուշադրութիւնը կը գրաւէ։ Շէյքսփիրի մէջ գրեթէ նոյնչափն ունին Լիր և Քորալլիա, Կլոդիոյ գուքսը և իւր խորթ որդին Էտմունդ։ Սոփոկէսի մէջ գործը և ժամանակը միակ են։ Շէյքսփիրի մէջ ժամանակն երկար, աեղերը տարբեր և գոյծերը բազմապատիկ են։ Սոփոկէսի մէջ զիտող զգացումն ազնուական վեհութիւն մ'է՝ որ ամէն տեղ կը շնչէ։ Շէյքսփիրի մէջ կրքերն ազգի ազգի են, նկարագիրը բազմազան և ծիւղազն ու արտասուք քովէ քով։ Իւր նպատակն է Հայրական տկարութիւնը հակադրել տղոց հրէշաւոր ապերախտութեան։ Երկու համընթաց գործ՝ զրոց կապակցութիւնը արեւետական միայն է՝ յար և նման նշաւտակի մը կը զուգընթանան այս գործոյն մէջ և հեղինակին միտքն ամբողջ կը պարզեն։

Եբեր թագաւոր մը Լիր՝ կեցծ շողողողութեանէ խաբուած իւր տէրութիւնը կը բաժնէ իւր երկու անդրանիկ զստերց կօնէրիլի և թէկունի և անոնց ամուսնոց մէջ է փնտ իւր կրտսեր աղջկան Քորալլիոյ որ անարտունջ կը տառապի իւր հօր կուրուքեան և աշատութեան վրայ։ Միւս կողմէն Կլոստրի գուքսը՝ նոյնպէս անհեռատես և աշատու՝ կը բաժնէ իւր գալըը իւր հարազատ որդւոյն Էտմարի և խորթ որդւոյն Էտմունի մէջ։

Երկու հարց պատիժն ալ մօտալուտ է։ Կլոստր հաւտալով իւր խորթ որդւոյն զրպարտութեանց՝ մահուան վճիռ կ'արձակէ իւր

հարազատ որդւոյն դէմ, և այնուհետեւ Էտմուն իւր զօրութեան վրայ անեղբայր վառահելով իւր հօրուն անուրեւրը կը փորէ։

Գլխաւոր գործին մէջ Լիր՝ նախատակած կ'աքսորուի իւր արքունիքէն Ռէլանի և Կլոստրիլի հրամանաւ, և մի միայն Քորալլիոյ քով ապական կը գտնէ՝ զոր յանձնառի անժառանգած և վտարած էր՝ և իւր զայրոյթը իւր կսկիծն իւր բանապաշտանք՝ ինչպէս նաեւ Քորալլիայի զողտը ծնողասէր անձնուրութիւնը Շէյքսփիրի ազգած են ամենէն բարձր ու երկնաթիռի շնչոտերը որ երբէք հնչած ըլլան Քերողդի մը քնարէն։ Փոթորակից գիշերով ցնորատանջ ծերունին բացօթեալ կը թափառի՝ մորկի դէմ աղաղակելով։

«Փէ՛՛ հով և պայթեցուր այտերդ, մռլէ՛, փչէ՛».

Դուք սահանք և մորիկե՛՛ հեղեղեցէք Միշնու ողողէք մեր աշտարակներն, խղզէք աքաղաղներն։

Դուք ծծմբուտ ու խորհրդակատար կրակներ կարապետք կաղնէկոտոր կայծակներու՝

Այրեցէք ճերմակ գլուխս ։ Եւ դու որդստուն ամէնադողո՛ղ՝

Ձա՛րկ քանդէ՛՛ երկրիս թաւ կըրտութիւնը, Պայթեցուր բնութեան կաղապարները, ջնջ՛ միանգամայն ամեն սեւմանքը .

Որք կը կազմեն ապերախտ մարդք...

... Յաթկէ՛՛ կրակ. հեղեղէ՛՛ անձրեւ. Ոչ անձրեւ ոչ հով ոչ կայծակ ոչ կրակ իմ աղջկաներս են.

Ձեմ՝ ամբաստաններ զձեզ՝ տարներք՝ իբրեւ ապաշնորհ .

Ոչ երբէք տուի ձեզ թագաւորութիւն մը, կոչեցի զձեզ իմ նոյայքս .

Դուք ինձ հնազանդութիւն չէք պարտիր, թոյլ տուք ուրեմն որ իջնէ

Ձեր գժպիկ զբօսանքը. հոմ կեցեր եմ՝ ձեր գերին,

Ձբաւոր՝ տկար՝ անգոր՝ անարգեալ ծերունի։

Այլ և այնպէս զձեզ ծառայական պաշտօնեաներ կ'անուանեմ

Որ երկու ապերախտ աղջիկներուդ հետ միացուցիք

Ձեռք երկնածին պատերազմներն՝ հակադաս գլխու մը

Դեր ու ճերմակ իմինին պէս: Կէ, Հոս, հոս. — Սոսկումն:

Այս կը ցուցնէ միշտ իմը՝ այս նոր Անտիքնէին թեւն անցած՝ թափառել՝ գլուխը բաց՝ արճրելի ու փոփոքիկ տակ: Ինչ խոր պրտութիւն կը տիրէ անիրաւեալ ու անյիշ չափար աղջկան՝ յետ այնչափ արկածից իւր հօր հետ առաջին տեսակցութեան մէջ: Դեռ, բռնին գտաւարու կը յիշէ իւր աղջիկը և իւր սրտին կը թխնի ցնորական սիրոյ մը անկապ թրթռումներն: Շէշքսփիւր մէջ անկը ցորթ թուող խօսքերն անշարժութեամբ են անպիտան խորութեամբ զգացումներով ու մտածութիւններով զորոք ընթերցողն իւր քմաւորման չափուն համեմատ կը բնցնէ, և ասոր հաւմար է որ քանի լայն ըմբռնեց՝ այնքան աւելի կը հիանանք վրան, և փոխանակ աւելն իմաստ մանրամասն բացատրելով զմեզ յափաքնելու՝ միշտ նոր ախորժ մը կ'ազդէ մեզ իւր ընթերցողով:

Հիմա հիւանդ պատմած կը բանապաշտէ: Բո՛ղիկ մը կը հսկէ իւր քով:

Քօրտէլիա, — Ինչպէս է թաղաւորը, Խիշիւր, — զեռ կը անհիշէ տիկին:

Ք. — Ով դուք, բարեբար առաւածք՝ բռնեցէք այդ հաստոյր վերքը իւր տուայ: Կեալ բնութեան: Ո՛հ այս նորէն մանկացեալ հօր շփոթեալ ոգ աղարարեալ զգայարարներն՝ կարեցէք կրկին:

Բ. — Եթէ հաճոյք Ձեռ վեհափառութեան՝ արժնուցէք թաղաւորը, երկար տեւեց քունը:

Ք. — Քու գիտութեանդ խորհօրց հարցուր, և վարուէ ըստ քու կամայց տրամադրութեան: Հազում է:

Աղնական մը. — Այո՛ տիկին, խոր քնոյն մէջ վրան նոր ձորձոր նետեցինք:

Բ. — Մ'զոտ եկէք՝ արկին, երբ զինքն արթնցնենք, տարակոյս չունիմ որ պիտի կարենայ ինքզինք զսպել:

Ք. — Շատ լաւ:

Բ. — Հաճեցէք, մտնեալ: Ո՛հ աւելի բարձրաձայն՝ երաժշտութիւն:

Ք. — Ո՛հ սիրելի Հայր, Ով կազմուածն՝ զե՛ն զիւր քու գեղց իմ շրթներդ վրայ և

թող այս համայրը գաւառնէ այն լարաչար ֆլանները զոր երկու քոյրերս տեղացուցին քու յարգութեանդ վրայ:

Քենդ, — Աղնիւ և սիրուն բամբիշ:

Ք. — Թե՛եւ անոնց հայրը չըլլայի՛ր, այդ ճերմակ մազերն անոնց գուժը շարժելու էին: Միթէ այդ երեսը պատարաւմով հողմոց են: Թարկուելու էր, կենալու էր խոր՝ անընկէց կայծակին պէմ, ամէնէն գոսկալի՛ երկնապայց կայծակներու նուրբ հարուածին, և հսկելու էիր — խեղճ կորուսեալ — այդ անօր սա, զաւարտով: Թշնամոյս շունը՝ թէ և զիս խածնէր՝ ասպարէս իրկուուն մը վառարանիս ջրով պիտի մաքրէ: Եւ զո՛ւ խեղճ հայր տորպուած էիր մեալ խողորմ, և աստանպական սրկկայից հետ խուն բռ խոնաւ յարկին վըրայ: Վա՛հ, վա՛հ, Զարմանք է որ միտք ու կեանք միանպամայն չսպառեցան: Կ'արթննայ... խօսեցէք հետը:

Բ. — Դուք խօսեցէք՝ Տիկին. պելի յարմար է:

Ք. — Ինչպէս է տէրս թագաւորս: Ինչպէս է Ձեր վեհափառութիւնը:

Լիւր. — Դե՛ ըրից որ զիս գերեզմանէս դուրս կը հանէք: — Դու հոգի մ'ես յեռանութեան. բայց ես փաշկանդուած եմ հրեզնէ անդի մը վրայ՝ զոր իմ արցունքս ներս ալ կը փաքցնեն հալած կապարի պէս:

Ք. — Տէր իմ, կը ճանչես զիս:

Լիւր. — Դիտեմ, ջոճ ոգեակ մ'ես: Ե՛րբ մեռար:

Ք. — (մեկուսի) Դե՛ռ, զե՛ռ շատ հեռու:

Բ. — Քուռն ընդ արթունս է. պահ մը միայն թողէք:

Լիւր. — Ո՛ր էի. ո՛ր եմ: Անոյ՛ ըրոյ տունընիս: Զարալար վարուեցան իմ հետս: Մեղքնալէս պիտի մեռնէի ուրիշ մը այսպէս տեսնելու: Զգրտեմ ինչ ըսեմ: Պիտի չվռնամ, ստոնք իմ աղջիկներդ են: Տե՛ս, նենց կը զգամ այս ասղան խալթելը, եւ բանի թէ ասպհով ըլլայի և զիտնայի թէ ինչ եմ:

Ք. — Ո՛հ երեսս նայէ՛ Տէր իմ, և վրաս տարածէ ձեռքերդ որ օրհնես զիս: Ո՛հ, Տէր իմ, ծնարպրելու չես:

Լիւր. — Կ'ապաշեմ՝ զիս մի ծաղրեք, ես

շատ յիմար գորովայից ծեր մարդ մ'եմ' ութսունամեայ և աւելի և շիտակ խօսելով կը վախնամ որ խելքս կատարեալ գլուխս չէ։ Ես գրեզ ճանչնալու եմ' կարծեմ, այս մարդն ալ, Բայց կը վարանիմ, որովհետեւ բնաւ չեմ գիտեր թէ քիչ աղէ է այս, և բոլոր հնարագիտութիւնս չլիշեցնիք ինձ այս հագուստներս, և ոչ ալ գիտեմ թէ այս գիշեր ո՛ւր օթեցի։ Վրաս չինդաք, որովհետեւ ախչափ իրաւ որչափ մարդ ըլլալս գիտեմ կարծեմ այդ տիկինը' այդ իմ աղջկես է՝ Քորտէլիա . . :

Ք. — Այն իսկ եմ' հայր. այն իսկ եմ' Լիբ. — Արցունքներդ են որ կը վազեն. յիրաւի կ'աղաչեմ' մի լար. Եթէ Թոյն ունիս աուր ինձ որ խմմ' Գիտեմ. զիս չես սիրեր, վասն զի քոյրերդ՝ որչափ կը յիշեմ' անիրաւեցան ինձի գէժ' Իս. պատճառ մ'ունիս. անոնք չունէին։

Ք. — Ո՛չ, ո՛չ մի պատճառ։
Լիբ. — Արեւօք ֆրանսա եմ' Գէնդ. — Քու տէրութեանդ իսկ մէջ՝ Տէր իմ. . .

Ք. — Կը հաճի՞ արեւօք Զեր վեհափառութիւնը քալել . . .

Լիբ. — Հետս ներողամիտ ըլլալու ես՝ կ'աղաչեմ՝ քեզի. ես ծեր ու յիմար եմ' . Իրեւ հակապատկեր ծերունոյն իրական և ցաւալի յիմարութեան՝ կը զուգարէ քեր-դորը արքունեաց միմոսին կեղծ յիմարութիւնը որ այս ամէն աղետից մէջ խեղկատակելու և երկդիմի խօսքեր ըսելու առիթ կը գտնէ։ Բայց հայր և աղջիկ բանափ դատարարեալ են, Քորտէլիա հայրը կը գրկէ և կ'աղաղակէ։

«Մ'եք առաջինը չենք որ լաւագոյն առաջագործութեամբք՝ յոռեգոյն բազդի պատահեցանք։ Քեզ համար՝ հարստահարեալ արքայ սիրտս կոտորած է. եթէ ոչ կը դիմագրաւէի դրող բազդին սպառնալեաց։ Պիտի չտեսնենք այդ գատերքն, այդ քոյրերը...»

Լիբ. — Ո՛չ ո՛չ, ո՛չ ո՛չ, Եկուք՝ աղէ. նրթանք բանալ։ Երկուքս միասին կ'ստի երգենք՝ ինչպէս Թոյնը վանդակին մէջ։ Երբ դու ինձ օրհնութիւն պիտի խնդրես՝ ես պիտի ծնրալու եմ և ներում խնդրեմ քեզէ։

Այդպէս պիտի ապրինք և աղօթենք և երգենք, և պատմենք հին վէպեր և խնամք ոսկի թիթեռնականք և լսենք խեղճ սինըրներն որ կը խօսին արքունեաց լուրերուն վրայով, և մենք ալ անոնց հետ պիտի խօսինք և ըսենք թէ ո՛վ է կորսնցնողն ու ո՛վ շահողը, թէ ո՛վ ներսն է ու գուրս. և պիտի ելլենք քաջատրելու իրաց խորհուրդներն իրեւ թէ Աստուծոյ լրտեսներն ըլլայինք. . . : Այս պիտի զոհողութեանց՝ ո՛վ իմ Քորտէլիա՝ աստուածք ինքնին խունկ կը մատուցանեն. Քեզիս ես. ան որ պիտի զմեզ բաժնէ պէտք է երկնքէն ջահ մը բերեն և այրելով հալածեն՝ աղուեսներու պէս»։

Ի լրումն աղետից Քորտէլիա խեղդամահ կը մեռնի և Լիբ հոգի կը փչէ աղջկանը մարմնոյն վրայ։ Երկրորդ գործոյն ելքը՝ անտարակոյս հակադրութեան համար՝ նուազ տիուր է։ Անժառանգեալ որպիսի Քորտէլիոյ պէս գորով կը պահէ իւր հօր. մենամարտի կը սպաննէ իւր խորթ եղբայրը և նորէն շնորհ կը գտնէ Լյուսպրի առջեւ՝ որ ուր ուրեմն խելամուտ եղած է իրաց ճշմարտութեան։

Շէյքսպիր իւր խաղին՝ վերջաւորութիւնը փոխած է բնիկ վէպէն՝ յորում Քորտէլիա յաղթող կը հանդիսանար։ Հաւանօրէն այս մեծ հանճարն ուղած է սոսկումն ու արհաւիրքը վերջին ծայրը հասցնել, թող թէ Անգլիական ազգասիրութիւնը վշտացուցած կ'ըլլար և ժողովուրդին համակրութիւնը կ'ուժացնէր Քորտէլիայէն՝ եթէ զայն յաղթող վերադարձած ցուցնէր Ղիպլիա ֆրանսական բանակի մը գլուխն անցած՝ ինչպէս իրօք կ'աւանդեն վէպը։

Շարայարեդի



Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք

ՀԱՅԿԱՅԱՆ ԳԻՒՏ ՄԵ՛ — Նախնական ոճով մշակութեան և պարսիկականութեան արհեստը ժիժ դարու մէջ Եւրոպայէն և Ամերիկայէն վերցուելու պատճառները՝ հետ-